թագաւորիս ի կնութիւն. և զհարսանիքն այլ պատրաստեցին և կատարեցին։ Բայց այս թագաւորս զոր առաջ ասացաք՝ ոչ էր ի թագաւորական զարմէն, և ոչ ինքն էր օծեալ թագաւորին որդի, այլ էր ի արքունի իշխանացն, այս-ինքն զինուոր. որ և վասն քաջութեան և հմտութեան պատերազմաց՝ զոր ցուցեալ (էր) ի Մահրաց երկիրն, և համբաւ և լուր նորա հասեալ էր բա-զում աշխարհն. առաքեցին առ նա պատգամաւորս և նուիրակս և զխոս-տումն իւրեանց. մինչ հաւանեցուցանելով զնա բերին ի Մահրաց երկրէն Պողտանայ երկրովն, և տարեալ նստուցին ըստ առաջ ասացելոցն՝ ի թա-գաւորութիւն։ Զոր ամենազօրն երկնաւոր թագաւորն թագաւորաց՝ տացէ նմա սիրտ սուրբ և զհոգի ուղիղ նորոգեսցէ ի նմա. և տացէ նմա միշտ խորհել զկամս Աստուծոյ և գնալ ի պատուիրանս նորա, և առնել զհաճոյսն Աստուծոյ, ըստ օրինի բարեպաշտ թագաւորաց. և ուղղափառութեամբ վարեսցէ զկեանս իւր. զի մի խոտորեսցի երբէք ի պատուիրանաց Աստուծոյ ալ կամ ահեակ. այլ միշտ բեւեռեալ ունիցի զերկիւղն և զսէրն Աստուծոյ ի սրտի իւրում. և ամենազօր թագաւորն անմահ տացէ նմա հոգի իմաստութեան և գիտութեան, հոգի երկիւղի աստուածպաշտութեան, հոգի հանճարոյ և զօ-րութեան. զի վարեսցէ զաշխարհս զայս խաղաղութեամբ և հանդարտու-թեամբ, ի չար պատերազմաց թշնամեաց անօրինաց. և զսուրն իւր ի վե-րայ թշնամեացն միշտ մխեցուսցէ կայծակամբ կաղնոյ. ամէն։ — Եւ մեք թշուառացեալքս ազգս Հայոց՝ զոր կամք գրկեալ ի թագաւորութենէ գա-հոյից և ի պերճութենէ իշխանացն, և մնացեալ կամք իբրեւ ճնճղուկ մի ի տանիս և իբրեւ բու աւերակի, և տարագիր եղեալ պանդխտեալ և նժդե-հեալ կամք ի այսմ օտար աշխարհս և օտար ջուրս և ի հողս, յաղագս օ-րինազանց և անկարգ գնացից մերոց. վասն որոյ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած և խնդրեսցուք զողորմութիւն նորա, զի տացէ այս թագաւորիս սիրտ մարմնեղէն և հոգի արդարութեան, զի միշտ քաղցր աչօք հայեսցէ ի վերայ ողորմելի և անտիրացեալ ազգիս մերոյ. զի խաղաղութեամբ և հան-դարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածպաշտութեամբ. զի այս է հաճոյ և ընդունելի առաջի Աստուծոյ փրկչին մերոյ, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։ Զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայն առ և ի տուր չնչոյ, այժմ (և) յաւի-տեանս. ամէն։

1577. Թվ. ՌԻԵ. Այս թագաւորիս հրամանաւն եկին երկու իշխանքն՝ որ կոչին Ռեվիզորներն (քննիչք), և երկու օր կացին ի Կամենիցս, և գնացին։

1577–8. Հայոց Թվ. ՌԻԶ. Ի այս ամին Օլախաց երկիրն նոր պարոն մտաւ, Բոդիովա Իւոն անուն նորա. վասն զի հին պարոն Բեգրա լցեր էր զեր-կիրն հռոմ ազգաւ և Թուրք ազգաւ. և երկրցիք խիստ մեծ նեղութեան մէջ էին հռոմին և Թուրքին ձեռն, որպէս երբեմն Իսրայելացիքն առ Փա-րաւոնի յԵգիպտոսն. վասն այն պատճառի ատեցին զինքն, և չկամեցան